| # | ***Գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի պայմաններ**** <br> ՀՀ կառավարության 2017 թ. մարտի 16-ի նիստի N 11-31 արձանագրային որոշմամբ հավանություն ստացած՝ ՀՀ-ում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրի («Ծրագիր») շրջանակներում | |
|---|---|---|
| 1. | Լիզինգառուի նկատմամբ ներկայացվող պահանջներ | Իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր |
| 2. | Լիզինգի առարկայի նկատմամբ ներկայացվող պահանջներ | Ծրագրի շրջանակներում լիզինգառուները կարող են լիզինգի միջոցով ձեռք բերել հետևյալ գյուղատնտեսական տեխնիկան.<br>✓ տարբեր մակնիշների տրակտորներ,<br>✓ կոմբայներ,<br>✓ հավաքիչ-մամլիչներ,<br>✓ տրակտորային շարքացաներ,<br>✓ տրակտորային գութաններ,<br>✓ տրակտորային խոտհնձիչներ,<br>✓ այլ գյուղատնտեսական տեխնիկա: |
| 3. | Կանխավճար | Լիզինգի առարկայի արժեքի 20%<br>Կանխավճարի/Գույքի արժեք հարաբերակցությունը՝ 20/100% |
| 4. | Ֆինանսավորման արժույթ | ՀՀ դրամ |
| 5. | ֆինանսավորման սահմանաչափ | Լիզինգի գումարի նվազագույն չեմը՝ 5 մլն ՀՀ դրամ:<br>Ծրագրի շրջանակներում նույն լիզինգառուի կողմից ձեռք բերվող լիզինգի առարկաների արժեքների հանրագումարը չպետք է գերազանցի 200 մլն դրամը |
| 6. | Լիզինգի տոկոսադրույք | Մինչև 14%, որը մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը տրամադրվող լիզինգների համար ամբողջությամբ սուբսիդավորվում է, որպեսզի լիզինգառուի կողմից վճարվող լիզինգի տարեկան տոկոսադրույքը կազմի 0 տոկոս՝ եթե լիզինգառուն համապատասխանում է ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 26-ի N 356-Լ որոշմամբ հաստատված «Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման երկրորդ միջոցառման» պայմաններին : |

| | | |
|---|---|---|
| 7. | Լիզինգի տոկոսադրույքի հաշվարկման կարգը | Լիզինգի հիմնական գումարի նվազող մնացորդի նկատմամբ |
| 8. | Լիզինգի տրամադրման վճար | Չի գանձվում |
| 9. | Ֆինանսավորման ժամկետ | 3-ից մինչև 10 տարի |
| 10. | Ժամանակացույցով սահմանված ժամկետից շուտ մայր գումարի վճարում | Տույժեր և տուգանքներ չեն գանձվում վաղաժամկետ մարումը սուբսիդավորման գործողության ընթացքում կատարելու դեպքում, վաղաժամկետ մարումը սուբսիդավորման գործողության ընթացքում կատարելու դեպքում, իսկ սուբսիդավորման դարարեցման կամ մերժման դեպքում՝ վաղաժամկետ մարված Մայր գումարի նկատմամբ հաշվարկվում է միանվագ 0.5%, եթե վաղաժամկետ մարումը կատարվել է Լիզինգի տրամադրումից հետո առաջին 6 /վեց/ ամսվա ընթացքում |
| 11. | Տույժ՝ Լիզինգի մայր գումարի և/կամ Տոկոսադրույքի մարման պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար** | Տույժ՝ ժամկետանց Լիզինգի և/կամ ժամկետանց Տոկոսագումարի 0.13% չափով կետանցի /պարտավորությունների կատարման համար սահմանված ժամկետների խախտման/ յուրաքանչյուր օրվա համար: Տույժերը և (կամ) տուգանքները սուբսիդավորման ենթակա չեն: |
| 12. | Լիզինգի գումարի և տոկոսագումարի մարումները | Ամսական մայր գումարի հավասարաչափ մարման եղանակով ՝համաձայն մարումների ժամանակացույցի՝ |
| 13. | Մարման արտոնյալ ժամկետ | Լիզինգի հիմնական գումարի մարման համար սահմանված արտոնյալ ժամկետը լիզինգը տրամադրելու պահից հաշվարկվում է առավելագույնը 6 ամիս, իսկ լիզինգի չսուբսիդավորվող տոկոսների վճարման պարտականությունը լիզինգառուի մոտ առաջանում է լիզինգի տրամադրման պահից սկսած: Բացի այդ, լիզինգառուի դիմումով Բանկի կողմից կարող են սահմանվել լիզինգի հիմնական գումարի վճարման համար դադարի շրջաններ՝ տարեկան մինչև 6 ամիս ժամկետով. |
| 14. | Ապահովություն | • Լիզինգառուի տնօրենի և/կամ հիմնադրի և/կամ այլ անձի/ երաշխավորություն,<br>• Գույքի/իրավունքի գրավ՝ ըստ պահանջի |
| 15. | Ապահովագրություն | Պարտադիր յուրաքանչյուր տարի լիզինգի առարկան ապահովագրվում է վնասվածքի և կորստյան ռիսկերից, որը կատարվում է Բանկի կողմից |
| 16. | Այլ պայմաններ | Մնացած պայմանները գործում են համաձայն ՀՀ |

| | | |
|---|---|---|
| | | կառավարության 2017 թվականի մարտի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագիրը հաստատելու մասին» N 11-31 որոշման, ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 31-ի N 356-Լ որոշման |

* Սույն պայմանները կիրառելի չեն «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի շրջանակում տրամադրվող լիզինգի դեպքում.

** Տուժանքի (տույժի և/կամ տուգանքի) փաստացի կիրառման դեպքում Տուժանքի տարեկան դրույքաչափը և/կամ Տուժանքների հանրագումարի չափը գործում է ՀՀ օրենսդրությամբ նշված թույլատրելի առավելագույն չափերի սահմաններում: